ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 24.02.2026թ. N 72/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.03.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Զ.Աղաջանյանը, Ա.Նազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին
1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ք. Երևան, Ազատության-24/1)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			Նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ	54 166 560	20%	64 999 872	**65 000 000**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում << պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝ -«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3" Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Զ.Աղաջանյան

Ա.Նազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան